



# PEARLS OF ARMENIAN HERITAGE

## Յովհան Մանդակունի (Հինգերորդ դար)

Հայ Եկեղեցւոյ ծիսական մատեաններուն կարկառուն կազմողներէն է Յովհան Մանդակունի Հայրապետը: Ան ժառանգած էր Սահակ Հայրապետին եւ Մեսրոպ Մաշտոցի աննկուն հաւատքը Աստուածային Նախախնամութեան վրայ եւ այդ հոգիով առաջնորդեց իր խնամքին յանձնուած հոգիներուն՝ մեր պատմութեան ամէնէն դժուարին ժամանակներուն:

Յովհան Մանդակունի ծնած է Արշամունիքի Ձախնիստ գիւղը. ծանօթ չենք ծննդեան թուականին. կը յաջորդէ Գիւտ Կաթողիկոսին հաւանաբար շուրջ 478ին: Պատանի տարիքին աշակերտած է Սբ. Սահակի եւ Մեսրոպ Մաշտոցի: Երկու տարբեր յիշատակութիւններ կան Մանդակունիի հայրապետութեան տեւողութեան մասին. ոմանք վեց տարիներ կու տան, իսկ ուրիշներ՝ շուրջ տասներկու, որ անշուշտ յաւանականը կը թուի, հիմնուելով յետագայ պատմիչներու տուած կցկտուր տեղեկութիւնները հաշտեցնելով:

Մանդակունիի անունով հասած են մեզի Կանոններ, որ կը փաստեն հայ Եկեղեցւոյ վարչական եւ ծիսական պաշտամունքին կազմութեան ընթացքը, շարունակելով Սբ. Գրիգոր Լուսաւորիչին հովուական խնամածութեամբ սկսած շարժումը: Ձեռագիրներուն մէջ Մանդակունիին ընծայուած ճառեր հասած են մեզի՝ հրատարակուած Վենետիկ 1860ին: Կարգ մը ուսումնասէրներ տարակոյս յարուցած են հարազատութեան մասին՝ հիմնուելով այս ճառերուն Սբ. Յովհան Ոսկեբերանի կամ Սբ. Եփրեմ Ասորիին ընծայուած ըլլալուն վրայ կարգ մը ձեռագիրներու մէջ: Բայց այս ճառերը գոյութիւն չունին ոչ Ոսկեբերանի եւ ոչ Եփրեմի յունարէն եւ ասորերէն բնագիրներուն մէջ:

Իրենց նիւթով՝ այս ճառերը կը շօշափեն բարոյական հարցեր, ինչպէս ապաշխարութեան եւ տնանկներուն ողորմութիւն տալու ի նպաստ, վաշխի դէմ, բամբասանքի, բարկանալուն, բարկութեան, հայիոյելու եւ երտուելու չար սովորութիւններուն դէմ, գինովցողներուն անօրէնութիւններուն դէմ, լկտի թատերական բեմադրութիւններուն դէմ: Կը նկարագրէ ժողովուրդին կեանքին մէջ հեթանոսութենէն մնացած սովորութիւններ, ցոյց կու տայ ասոնց խորշելի եւ վնասաբեր հետեւանքները, կը գովէ քրիստոնէական ընտիր վարքին բարոյական գերազանցութիւնը:

Մանդակունիին ոճը զօրաւոր է եւ պատկերալից, լեզուն վճիտ եւ թարմ՝ զերծ արուեստականութենէ, կը կրէ Մաշտոցեան դպրոցին կենսունակ, պարզ եւ ուղիղ նկարագիրը:

*(Քաղուած Հ. Կիրեղ Վրդ. Քիպարեանի “Պատմութիւն Հայ Գրականութեան” հատորէն)*